

**ԲԱՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲՈՒՆ ԿԱՍ ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ**

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ա. Ս.

Բարդությունների կազմության ժամանակ բայական բաղադրիչը ավելի շատ հանդիպում է բաղադրող հիմքի դերում: Սա պատճառաբանվում է այն հանգամանքով, որ հայերենում բուն կամ իսկական բարդություններում գերադաս անդամը երկրորդ բաղադրիչն է, իսկ առաջին բաղադրիչը՝ նրա լրացումը: Ինչպես գիտենք, բայը բառակազմությանը ամենահաճախ մասնակցող խոսքի մասերից է և սակավաթիվ դեպքերում է հանդես գալիս որպես սերող հիմք:

Ստորև կներկայացնենք այն խոսքի մասերի ձևաբանական կաղապարները, որոնց կազմությանը մասնակցել են բայական բաղադրիչներ*:

Գ + Բ կաղապարով կազմվում են մեծ թվով նոր բառեր, որոնք կարող են լինել և՛ գոյականներ, և՛ ածականներ: Այս կաղապարով բարդություններ կազմելը բավական կենսունակ է ժամանակակից հայերենում: Այստեղ բարդության հիմնական իմաստը դրսևորվում է բայարմատի միջոցով, իսկ գոյական բաղադրիչը տարբեր իմաստներով ու հարաբերություններով լրացնում է գերադաս անդամին:

Գոյականներ. լրաբեր, ատամնաբույժ, երկրաշարժ, հրաբուխ, դասախոս, հերթապահ, հարկահան, աստղագուշակ, բաժակակալ, բակապահ, թեյավաճառ և այլն:

Այս կաղապարով բարդություններ են կազմվում նաև առանց հոդակապի՝ կայծիան, խրատասաց, բաժանարար, կովկիթ, հավկիթ, ձկնորս, ունկնդիր, հյուրընկալ և այլն:

Այս կառուցվածքով գոյականները կա՛մ հետին կազմություններ են, կա՛մ իմաստի անցում կատարածներ:

Ածականներ. Այս կաղապարով ավելի շատ կազմվում են ածականներ: Վերջիններիս գերակշռելը բացատրվում է նրանով, որ բայարմատը արտահայտում է գործողության ընդհանուր հատկանիշ՝ մարդատար, պատվաբեր, սրտաբուխ, հողաբաշխ, ազգահալած, կարգապահ, հարկաձածկ, վանքապատկան, ծաղկահյուս, ազգադավ, սերմնագուրկ և այլն:

Ա + Բ կաղապարը ժամանակակից հայերենում գործուն է, և հիմնականում ստացվում են ածականներ՝ հանդարտաձուփ, նրբահյուս, թեթևասահ, հումակեր, քաղցրաբուխ, մեծաձախ, կարճատև, երկարակյաց, դատարկախոս և այլն:

* Խոսքի մասերը կներկայացնենք հետևյալ ձևով՝ Գ (գոյական), Ա (ածական), Բ (բայ), Մ (մակբայ), իսկ հոդակապը + նշանով:

Հանդիպում են նաև գոյական կազմություններ՝ բարեխոս, ստախոս, հնավաճառ, բարեկամ, ուղղաթիռ և այլն: Այս կաղապարով գոյական կազմությունները կարող են գործածվել նաև որպես ածականներ:

Ըստ պրոֆ. Ս. Գալստյանի՝ «Որպես առանձին ենթատիպար՝ պետք է առանձնացնել այն բարդ բառերը, որոնց մեջ ածականը նաև մակբայական կիրառություն ունի և արտահայտում է ձևի մակբայի իմաստ¹»՝ ծանրաշարժ, առատահոս, լայնատարած, մեղմածուփ, շքեղագարդ և այլն:

Մ + Բ կաղապարը տեսականորեն նույնքան արդյունավետ է, որքան Ա + Գ կաղապարը, և բացառապես ստացվում են ածականներ, քանի որ ներառում են հատկանշային իմաստ՝ հեշտածին, դյուրամշակ, ճշտապահ, հավերժաբուխ, մշտատև, արագահոս, առատաբուխ, հանկարծածին, արագընթաց, դյուրահալ, դժվարահալ, դյուրահավան, արագավազ, վաղաթառամ, և այլն: Այս կաղապարով հանդիպում են նաև սակավաթիվ գոյականներ՝ հեռադետ, հեռախոս, բարձրախոս, հեռաչափ, նորեկ, առաջընթաց և այլն:

Ժամանակակից հայերենում հանդիպում են նաև Բ + Բ կաղապարով կազմություններ: Բայը իր բուն կիրառությամբ (որպես դիմավոր բայ) բայի լրացում չի լինում (իսկ ներքոհիշյալ օրինակներում բայական արմատը հանդես է գալիս անվանական կիրառությամբ): Ըստ այդմ էլ մենք առանձնացրել ենք հետևյալ օրինակները՝ զբոսասեր, զրուցասեր, վարժասեր, լսասեր, զգայացունց, խոովատենչ և այլն:

Ինչ վերաբերում է թվական, դերանուն, կապ և շաղկապ խոսքի մասերի հետ բայական բաղադրիչով բուն կամ իսկական բարդություն կազմելուն, ապա պրոֆեսոր Ս. Գալստյանը, անդրադառնալով այս հարցին, նշում է. «Վերջին երկու կարգի բառախմբերը որպես նյութական իմաստ չունեցող, ձևական խոսքի մասեր իրենց բուն կիրառություններով ստորադասական բառակապակցություններ չեն կազմում: Կապի և կապի խնդրի կապակցությունը բառակապակցություն չէ, այդտեղ բուն իմաստով լրացում-լրացյալ հարաբերություն չկա, այն վերլուծական բառաձև է:

Դրանից բխում է, որ կապերը երկարմատ իսկական բարդությունների կազմությանը որպես բաղադրիչներ իրենց բուն կիրառությամբ չեն մասնակցում²»:

Թվականը բառահարաբերություններում հանդես է գալիս որպես ածական, այդ պատճառով էլ թվականով կազմությունները կարելի է քննել Ա + Գ կաղապարի տակ:

Դերանունների մի մասը բառակապակցություններում հանդես է գալիս որպես գոյական (ես, դու, սա, ով և այլն), մյուսը՝ ածական (այս, այսպիսի և այլն), երրորդը՝ մակբայ (այսպես, այսչափ և այլն):

¹ Գալստյան Ս., *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Ե., 1978, էջ 23:

² Նույն տեղում, էջ 25:

Հայերենի դերանուններից բառակազմության տեսակետից շատ կենսունակ է ինքը դերանունը: Ըստ Հ. Բարսեղյանի «Հայերենի ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարանի» (Երեվան, 1973) տվյալների՝ նման բառերի թիվը ածանցյալների հետ շուրջ 650 է:

Ստորև բերվելիք օրինակներից պարզ է դառնում, որ ինքը դերանունը երրորդ դեմքի իմաստ առհասարակ չի արտահայտում. այն արտահայտում է՝ ա) երկրորդ բաղադրիչի արտահայտած գործողության իրեն ուղղված լինելը՝ ինքնաբույժ, ինքնաբավ, ինքնադատ, ինքնակեզ, ինքնամեծար, ինքնասեր, ինքնամերժ, ինքնահիաց և այլն. հարկ է նշել, որ այս իմաստով գործածվող գրեթե բոլոր կազմությունները ածականներ են, բ) երկրորդ բաղադրիչի արտահայտած գործողության ինքնին կատարվելը՝ ինքնաթիռ, ինքնաբաց, ինքնաթափ, ինքնահոս, ինքնածին, ինքնաբուխ և այլն:

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այս կազմությունների երկրորդ բաղադրիչների գերակշռող մասը բուն բայարմատներ են: Դրանց մեծ մասը մեզ է ժառանգվել գրաբարից: Բառակազմական իր դրսևորումներով ինքն դերանունից քիչ է տարբերվում յուր դերանունը: Սակայն այս դերանունը արդի բառակազմության մեջ այլևս կենսունակ չէ, և Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» (1976) յուր + բայահիմք կաղապարով հանդիպել ենք 9 օրինակի, որոնք բոլորն էլ ածականներ են՝ յուրաբնակ, յուրադիր, յուրածին, յուրակերտ, յուրահնար, յուրահոգ, յուրաշարժ, յուրաշեն, յուրաստեղծ:

Երկարմատ իսկական բարդության բաղադրիչներին մասնակցող մյուս դերանունները (ողջ, ամեն, բոլոր, այ) գրաբարում արդեն իսկ ածականներ էին (այլ-ը՝ նան մակբայ) և բառակազմությանը մասնակցում են համապատասխան խոսքի մասերի դերում: Ինչպես Ա + Բ կաղապարի դեպքում, այնպես էլ այստեղ Դ + Բ զուգորդումից հիմնականում ստացվում են ածականներ՝ այլածագ, այլամերժ, այլադավան, այլասեր, այլածին, այլատյաց, ամենադետ, ամենագնաց, ամենագրավ, բոլորանվեր, բոլորաշեն, բոլորակերտ, ողջանվեր:

Թվական անունը բառակապակցություններում իր կիրառությամբ ածականներից չի տարբերվում և հանդես է գալիս որպես որոշիչ: Բառակազմությանը կարող են մասնակցել բոլոր թվականները. իսկական բարդություններում հատկապես գերակշիռ են 1-ից 9-ը թրվականներով կազմված երկարմատ բարդությունները, ընդ որում՝ որպես երկրորդ բաղադրիչ մեծ մասամբ հանդես են գալիս գոյական արմատներ, սակայն հանդիպել են նաև մեզ հետաքրքրող բայական հիմքերով կազմություններ՝ միահավան, միածին, իննուծին, հնգասեր, միագոչ, միախոս և այլն: Բայանունների հետ բաղադրված թվականները բոլորն էլ մակբայական կիրառություն ունեն:

Բայ խոսքի մասը, լինելով բարդության գերադաս անդամ (բաղադրող հիմք) և արտահայտվելով բայարմատով, բայահիմքով, կազմում է ածականներ, գոյականներ:

Բայական գերադաս բաղադրիչով կազմված բարդությունները մեծ տեղ են գրավում հայերենի բարդությունների կազմում և հայերենի բառապաշարը հարստացնում են նոր գոյականներով ու ածականներով, իսկ սրանցից էլ ածանցի հավելմամբ կազմվում են բազմաթիվ ածանցավոր բառեր: Իսկ ինչ վերաբերում է բայական հիմքերի այն ձևաբանական կաղապարներին, որտեղ բայական հիմքերը հանդես են գալիս սերող հիմքի դերում, ապա կարելի է առանձնացնել հետևյալը: Գիտենք, որ բարդ բառերի զծային հերթականության աջակողմյան բաղադրիչը բաղադրող հիմքն է, ձախակողմյան հիմքը՝ սերող: Հարկ է նշել, որ եթե բայական բաղադրիչը բաղադրող հիմքում երևան է հանում տիպաբանական բազմազան տարբերակներ, ապա սերող հիմքում նա հանդես է գալիս բայահիմքի և դերբայական հիմքի ձևով: Իր քանակային դրսևորումներով այս կաղապարը զգալիորեն զիջում է այն կաղապարին, որում բայահիմքը հանդես է գալիս որպես գերադաս բաղադրիչ, որովհետև բայը հազվադեպ է լրացում դառնում այլ խոսքի մասերի: Մակայն, այնուամենայնիվ, կան նաև այնպիսի կառուցվածքներով բարդություններ, որոնց առաջին բաղադրիչը բայահիմք, բայարմատ կամ դերբայ է:

Հայտնի է, որ բայը գոյականի լրացում կարող է լինել միայն դերբայական ձևով, այսինքն՝ ածականական գործածությամբ: Մակայն հանդիպում են նաև այլ հիմքերով կազմություններ, որոնք եթե վերածենք բառակապակցության, անորոշ դերբայի սեռական հոլովածնի իմաստը կստանան:

Բ + Գ կաղապարով հիմնականում կազմվում են գոյականներ՝ սպասասրահ, պարասրահ, զննաձող, կշռաձող, դիտակայան, ցատկաձող, պտտաձող, արգելավայր, ընկալագիր, աղերսագիր, անցագիր, պարսավագիր և այլն:

Դերբայական հիմք + գոյական կաղապարով ևս կերտվում են գոյականներ՝ գրելակերպ, վառելափայտ, խոսելացավ, գործելակերպ, վարվելաձև, մեռելահաց, գրելացավ, գրելառճ, մեռելադեմ, նստելատեղ, վարելահող և այլն:

Բ + Ա կաղապարով կազմվում են միայն ածականներ: Պետք է նշել, որ այս կաղապարով շատ քիչ բարդություններ են կազմվում: Գերակշռում են -կից արմատական և -ուն(ակ) ածանցավոր բաղադրիչներով կազմություններ, թեև կան նաև ուրիշ հիմքերով կազմություններ՝ գործունակ, պաշտպանունակ, շարժակից, մարտունակ, պահակից, գործակից, ծլունակ, խոսունակ, շարժունակ, ընկալունակ, տեսարժան, հարգարժան և այլն:

Հարկ է նշել, որ գրաբարում այս կաղապարով կազմվում էին հիմնականում ածանցավոր բառեր: Այսպիսի կազմություններում Լ. Հովսեփյանը առանձնացնում է երկու բաց խումբ՝ անորոշ դերբայ + ի(ք) և անորոշ դերբայ + ություն կառուցվածքով³, սակայն ժամանակակից հայերենում հանդիպում են ոչ միայն ածանցավոր բառեր,

³ Տե՛ս Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987, էջ 80:

այլև բարդություններ՝ գործելաշրջան, գրելառճ, գրելաթուղթ, խոսելատուն: Վերոհիշյալ կաղապարը ժամանակակից հայերենում սկսել է առավել ևս գործածվել գեղարվեստական գրականությունում և մամուլում:

Ստորև առավել մանրամասն կփորձենք անդրադառնալ դերբայական սերող հիմք+բաղադրող հիմք կաղապարներին: Գիտենք, որ հայերենի անկախ դերբայներից անորոշը, ենթակայականը և հարակատարը բուն կամ իսկական բարդություններում և ածանցավոր բաղադրություններում բառակազմությանը մասնակցում են նաև առանց փոփոխության՝ պահպանելով ոչ միայն ներածանցները, այլև բայական բառակազմական ածանց-վերջավորությունները (-ել, -ալ, -ոդ, -ած):

Ժամանակակից հայերենում անորոշ դերբայը՝ որպես բառակազմական անփոփոխ բաղադրիչ, կարող է հանդես գալ և՛ վերլուծական, և՛ համադրական կազմություններում: Ինչպես նշում է Ս. Գալըստյանը, համադրական բարդություններում (բուն կամ իսկական բարդություններ, ածանցավոր բաղադրություններ) անորոշ դերբայը առանց որևէ փոփոխության մասնակցում է հետևյալ կառուցվածքային կազմություններին. ա) նախադաս սերող հիմք+վերջածանց՝ կազմելով ոչ բայ խոսքի մասերի բառեր, բ) վերջադաս սերող հիմք+նախածանց՝ ձևավորելով բառակազմական վերջին քայլում նախածանցի հավելմամբ բաղադրված բայ խոսքի մասերի բառեր, գ) սերող (ձախակողմյան) հիմք բուն կամ իսկական բարդություններում՝ կազմելով ոչ բայ խոսքի մասերի բառեր, դ) բաղադրող (աջակողմյան) հիմք բուն կամ իսկական բարդություններում՝ կազմելով բայեր⁴:

Վերը նշված կաղապարներից մեզ հետաքրքրում են «ա» և «գ» կետերի, նաև որոշ վերապահությամբ՝ «բ» կետի բառերը, քանի որ մյուս ձևերից ստացվում են բայեր:

Նախադաս սերող հիմք+վերջածանց կառույցով կազմված ածանցավոր բառերը հայերենում այնքան էլ շատ չեն, քանի որ հաճախ վերջածանցի բաղադրման դեպքում բայական վերջավորությունները սղվում են: Սակայն այս կաղապարում իր ձևով և նոր բառեր կերտելու հաճախականությամբ առանձնանում են անորոշ դերբայ+իք ածանցով կազմված գոյականները, որոնք կարելի է բաժանել հետևյալ խմբերի. ա) նախատիպ բայով արտահայտված գործողության ենթակա առարկան՝ խմելիք, ուտելիք, ծխելիք, հագնելիք, վառելիք, առնելիք, տալիք, ստանալիք, ասելիք և այլն, բ) նախատիպի բայով արտահայտված գործողության կատարման տեղը՝ ճեմելիք, բազմելիք, ապաստանելիք և այլն, գ) գործիք, որը կատարում կամ որով նախատեսվում է կատարելու նախատիպի ցույց տված գործողությունը՝ հոտոտելիք, շոշափելիք, ծամելիք, լսելիք:

⁴ Գալստյան Ս., *Անորոշ դերբայը բառակազմական անփոփոխ հիմք (Բանբեր Երևանի համալսարանի, 1(124), Ե., 2008, էջ 99)*:

Սերող (ձախակողմյան) հիմք բուն կամ իսկական բարդություններով կաղապարում բառակազմությամբ ստացվում են անվանական խոսքի մասեր: Լ. Հովսեփյանը իր «Գրաբարի բառակազմությունը» աշխատության մեջ սրա համար առանձնացնում է միայն մեկ բառ՝ լալետո⁵ (լացատեղ, ողբավայր), սակայն այս կաղապարը ժամանակակից հայերենում բավական զարգացում է ապրել, և կազմվում է բարդ բառերի բաց շարք. այսինքն՝ նոր բաղադրությունների կազմության հնարավորությունը չբացառող: Այս կաղապարով կազմությունների սերող հիմքում գործածության լայն հաճախականություն ունեն գրել, խոսել, ուտել, նստել, վարել, մտածել դերբայները, որոնց հետ բաղադրող հիմքում հաճախ հանդես են գալիս տեղ, ձև, ոճ, նյութ, ցավ և այլ հիմքերը՝ նստելատեղ, թափելատեղ, խոսելատեղ, խոսելակերպ, սիրելատեղ, նստելաձև, մտածելաձև, մտածելակերպ, խոսելաձև, վարվելաձև, պատմելաձև, գրելաձև, գրելառձ, պատմելառձ, խոսելատուն, վառելանյութ, վառելափայտ, վարելահող, ծխելասեր, իշխելասեր, խոսելասեր, նստելավարձ, խոսելացավ, գրելացավ, սիրելացավ և այլն: Օրինակներից ակնհայտ է, որ անորոշ դերբայը, հանդես գալով սեռական հոլովի նշանակությամբ, բաղադրություններում դրսևորվում է մերթ զոյականական նշանակությամբ, եթե բաղադրող հիմքը գոյական է (գրելաձև-գրելու ձև, վարելահող-վարելու հող, նստելավարձ-նստելու վարձ, վառելանյութ-վառելու նյութ, խոսելացավ-խոսելու ցավ), մերթ բայական նշանակությամբ՝ դառնալով խնդրային լրացում, եթե բաղադրող հիմքը բայական է (իշխելասեր-իշխել սիրող, ծխելասեր-ծխել սիրող, ուտելասեր-ուտել սիրող, խոսելասեր-խոսել սիրող)⁶:

Հարկ է նշել, որ նախաձանց+անորոշ դերբայ կաղապարի դեպքում թեև պետք է ստացվեին բայեր, սակայն ժողովրդախոսակցական լեզվում վերջերս նկատվում է ան նախաձանցի հավելմամբ ոչ բայ խոսքի մասեր ներկայացնող բառերի կազմություններ, որոնք կարող են լինել և՛ ածականներ, և՛ մակբայներ՝ կախված նրանից, թե նախադասության մեջ որ անդամին կլրացնեն: Այդ օրինակներից մեզ հանդիպել են հետևյալ կազմությունները՝ անգրել, անկտրել, անպատմել, անկրկնել, անմտածել, անբեկանել, անստուգել, անհանգստանալ (առանց հանգստանալու իմաստով), աննայել: Կարելի է ասել, որ նման կառույցները առայժմ գործածական են ժողովրդախոսակցական, մասամբ էլ լրագրային և գեղարվեստական լեզվում, քանի որ նրանց արտահայտած իմաստի գրական ճիշտ դրսևորումները հիմնականում կազմվում են առանց նախադրության (անկրկնել-առանց կրկնելու, անկտրել-առանց կտրելու, չկտրած, անստուգել-առանց ստուգելու, աննայել-առանց նայելու և այլն):

Այլ պատկեր ենք ստանում, սակայն, հարակատար և ենթակայական դերբայների գործածության առումով, քանի որ այս երկու դերբայներն իրենց կիրառություններով (դերբայական, անվանական) մեծ բառակազմական նշանակություն ունեն ժամանակակից

⁵ Հովսեփյան Լ., նշվ. աշխ., էջ 80:

⁶ Գալստյան Ս., Անորոշ դերբայը բառակազմական անփոփոխ հիմք, էջ 103:

հայերենում: Այս դերբայների ցուցիչները (-ած, -ող) ժամանակակից հայերենում վերածվել են նաև ածանցների՝ որոնցով կազմվում են նաև գոյականներ, և՛ ածականներ:

Ենթակայական դերբայը՝ որպես բուն կամ իսկական բարդության սերող հիմք՝ քերթողահայր, խանձողակոթ, ուսանողատյաց, ծնողասեր, ծնողասպան, ծնողատյաց, ծնողապաշտ:

Ենթակայական դերբայը՝ որպես բուն կամ իսկական բարդության բաղադրող հիմք: Հարկ նշել, որ այս կադապարի բառերը կարելի է բաժանել երկու խմբի. 1) բառեր, որոնք առաջացել են բառակապակցություններից՝ հեռուստադիտող, ռադիոլստող, ռադիոսիրող, կինոդիտող, իրավախախտող, լրագրող, 2) բառեր, որոնք առաջացել են անորոշ դերբայից՝ մեքենագրող, սղագրող, մեղադրող, գծագրող արդյունահանող, ուսումնասիրող, արդյունաբերող և այլն: Ինչպես տեսնում ենք, այս օրինակներում ենթակայական դերբայով արտահայտված հիմքերի մեջ ակնհայտ է անվանական նշանակությունը:

Ենթակայական դերբայի պես երկակի կիրառություններ ունի հարակատար դերբայը, որի վերջավորությունները ևս ժամանակակից հայերենում ածանցական նշանակություն ունեն: Այս երևույթները բխում են բառակազմության և քերականության սերտ հարաբերություններից: Ած ածանցը դեռևս հնում որոշ բայարմատներից կազմել է ածականներ (գործողության հետ կապված) և գոյականներ (իբրև գործողության հետևանք՝ դարձյալ գործողության հետ կապված): -Ած ածանցը աշխարհաբարում զարգացրել է գործողության հետ կապված ածականի գաղափարը և սովորաբար բայերից կազմում է բազմաթիվ ձևեր ինչպես գործողության հետ կապված հատկանիշի, այնպես էլ անցյալ դերբայի նշանակությամբ⁷: Այնուհետև այն գրական հայերենում ձեռք է բերել հարակատար դերբայի վերջավորության իմաստ:

Բացի վերը նշված բառակազմական գործառույթներից, ինչպես գիտենք, հարակատար դերբայը (-ած), ենթակայականը (-ող) և ապառնի երկրորդը (-իք) բուն դերբայական կիրառությամբ կազմում են կերպային հարաբերություն՝ ներկա, անցյալ և ապառնի նշանակությամբ:

Բայական հիմքերով կազմված բուն կամ իսկական բարդությունների ձևաբանական կադապարների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բայական հիմքերի զուգադրություններից մեծ մասամբ ստացվում են ածականներ: Նաև կարելի է ասել, որ բայական հիմքերը բառաբաղադրություններում հիմնականում հանդես են գալիս բաղադրող հիմքի դերում:

⁷ Տե՛ս **Աբրահամյան Ա.**, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Ե., 1953, էջ 194:

**МОРФОЛОГИЧЕСКИЕ МОДЕЛИ ИСКОННО
СЛОЖНЫХ СЛОВ, ОБРАЗОВАННЫХ ОТ ГЛАГОЛЬНЫХ ОСНОВ**

ХАЧАТРЯН А. С.

Резюме

Глагольные основы играют важную роль в процессе словообразования. С помощью глагольной основы образуются прилагательные и существительные. Образованные таким путем сложные слова обогащают лексику армянского языка. Помимо того, другим словообразовательным компонентом являются суффиксы, посредством которых образуются суффиксальные слова. Что же касается глагольных основ тех морфологических компонентов, в которых глагольная основа является производной, то следует отметить, что глагольная основа в большинстве случаев представляет собой составную основу, поскольку глаголы в редких случаях служат дополнением для других частей речи. В армянском языке имеются также сложные слова, первым компонентом которых являются глагольная основа либо причастие (неопределенное, действительное и страдательное).